


1937

891.99
14-64



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀ
ԼՈՒՍԺՈՂՎՈՄԱՏ
ՄԵԾԱԳԱՍՏԱԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԱԴ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ



ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅՑԱՆ
(Խնկո Ապեր)

Ա Ռ Ա Կ Ն Ե Ր



ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵՊԱՐ

1937

891.99

164

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍՖՈՂԿՈՄԱՏ 110 NOV 2011
ՄԵՇՄԱԳԱՍՏԻՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

891.99

Խ-64

Ա. Ա.


ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ
(Խնկո Ապեր)

Ա Պ Ա Կ Ն Ե Ր

Հ Հ Հ Հ Հ Հ Հ
Հ Հ Հ Հ Հ Հ Հ
Հ Հ Հ Հ Հ Հ Հ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵՊԱՆ

1987



Առակներ են չփն որերից,
Բայց յես դրի առա նորից:
Ա. Խ.

ՃՊՈՒԽՈՆ ՈՒ ՄՐՁՅՈՒՆԸ

Թռի—վռի մի ճպուռ
Վողամառը շուռ ու մուռ,
Յերգեց, ճռաց
Ճռճռաց:
Մին ել, ըհը, ձմեռը
Փռեց իրա թերը.
Բացեց գորգը սպիտակ,
Դաշտերն առավ ձյունի տակ:
Անցան պայծառ որերը...
Ել վո՞րն ասեմ, ել վո՞րը.
Յերբ ամեն մի թփի տակ
Թե՛ սեղան կար, թե՛ ոթյակ:
Յեկան որեր ցրտաշունչ,
Ճպուռն ընկալ լուռ ու մունջ.
Քաղցած փորին ել ինչ յերդ,
Յուրտը տարավ վոտ ու ձեռք,
Զնդըր—զնդըր դողալով,
Ծանր—ծանր սողալով,
Նա մրջյունին ասում եր.
— Գլխիդ մատադ, սա՛նամեր,
Մի ճար արա, շունչ առնեմ,
Յրտից, սովից չըմեռնեմ:
Կերակրի՛, տաքացրո՛ւ,
Մինչև գարուն ապրեցրո՛ւ,
— Ի՞նչ խարար ե, սա՛նիկս,

Զարմանում եմ, ջա՞նիկս.
 Զաշխատեցի՞ր ամառը,
 Ասս, ի՞նչ եր պատճառը:
 — Եղան բանի, սա՞նամեր,
 Ել ժամանակ ո՞վ ուներ.
 Են խոտերում բուրավետ
 Յերգում եյինք մերոնց հետ:
 — Ուրեմն դու...—Այո՛ յես,
 Վողջ ամառը դես ու դեն
 Յերգ յերգեցի մշտապես:
 — Յերգեցիր, հա՛. չա՛տ բարի,
 Այժմ ել բռնի վերվերի,
 Քամին ծափ տա՛ դու պարի:

ԱԳՐԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Բախտի բերմամբ
 Թէ պատահմամբ
 Մի մեծ աղռավ
 Մի գունդ պանիր
 Դաշտում գտավ,
 Կտուցն առավ,
 Ծառին թռավ:
 Ո, ի՞նչ պանիր, դեղին վոսկի...
 Բայց դեռ չառած համն իսկի,
 Աղվեսն անցավ ծառի մոտով,
 Գերվեց,
 Երվեց
 Պանրի հոտով:
 Վազեց գնաց բերնի ջուրը
 Յեկ թուլացան կուռն ու ճուռը:
 Են ժամանակ իրա ձեւին,
 Ծառի տակից, աչքն աղռավին,
 Հեղիկ, նազիկ,
 Փափկամազիկ,
 Բացեց լեզուն անուշ, մեղուշ,

Թափեց, չափեց շաքար ու նուշ.
 «Ինչքան լավն ես,
 Յես քո դերին,
 Քո եղ սեիկ
 Վառ աչքերին,
 Նուրբ ծալքերով
 Զույգ թեերին:
 Մի դու մտիկ,
 Եղան քթիկ,
 Եղան ձտիկ.
 Մախմուր աղին,
 Խաս ու զումաշ
 Աւասն հագին:
 Գիտեմ անշուշտ իմ քուրիկի
 Զայնն ել կըլի հրեշտակի:
 Յերգի՛, քո՛ւրիկ, մի՛ ամաչի,
 Իմ ուղածը մի մեծ բան չի:
 Թե վոր չքնաղ եղ տեսքի հետ
 Յերգելում ել յեղար վարպետ,
 Ո՛, կըղառնաս իմ սրբուհի,
 Թոչունների մայր թագուհի»:
 Աղռավ աղին իրեն տված
 Գովեստներից շշմած, ուռած՝
 Աղռավային
 Բկովը մին,
 Վոր չըկըռուաց.
 Պանիրն ընկալ ծառիցը ցած,
 Շողոքորթը ըսխեց, դնաց:

Ճ Ա Ն Ճ

Խոնարհ ու հեղ
 Մի հոգնած յեղ,
 Արորն ուսին,
 Ճանճը պղղին,
 Մի իրիկուն

Գալիս եղ տուն:
 Մին ել ճամփին
 Մի ուրիշ ճանձ
 Ասավ. «Տո՛, մա՞նչ,
 Ես յեղան հետ
 Վո՞րտեղից եղ . . .»:
 Նա, ցից արած
 Քիթը, ասաց.
 —Մենք վո՞րտեղից.
 Վարում եյինք,
 Վարատեղից:

ԿԿՈՒՆ ՅԵՎ Ա.ՔԼՈՐԸ

Զնաշխարհիկ,
 իմ աքլորիկ,
 Զայնդ զիւզիւ,
 Վոսկե ծիլ-ծիլ.
 Յերգերիդ մեջ
 Բյուր յելեվեջ:
 — Կկո՞ւ քուրիկ,
 Հուրիկ, բուրիկ,
 Քո ճայնն ել ե
 Լավ գեղգեղում,
 Ծոր ե տալիս
 Ու մղմղում:
 Յերգ եմ լսել
 Յես շատ ու քիչ,
 Բայց չեմ տեսել
 Քեզ պես յերդիչ:
 — Իմ բնատուր
 Վոսկեփետուր,
 Կուզեմ
 Լսեմ
 Զայնդ անսպառ
 Միշտ, անդադար,

Թեկուզ մի դար:
 — Պուճպուճուրիկ,
 Մի պուտ ջրիկ,
 Կկու քուրիկ,
 Յերգլում եմ յես՝
 Վո՞ր լուռմ ես
 Եսչա՛փի, պո՞ւճուր,
 Բաղասելով իմ աչքերը
 Կտրում են ջուր:
 Վո՞րտեղից ե քեզ այդպես ձայն,
 Մաքուր, քնքուշ ու զնդդնդան,
 Դուք եղպես եք
 Ամբողջ ցեղով,
 Մի բուռ բան եք
 Թեև տեղով,
 Բայց ձեր յերգը
 Խիստ հաջողակ,
 Չունի, չունի
 Վոչ մի սոխակ:
 — Գոհ եմ քեզնից,
 Զիվան աքլոր.
 Խղճով ասենք,
 Դու միալար
 Լավ ես յերգում
 Դրախտահավից,
 Թոչունների
 Լավի լավից.
 Վողջ աշխարհը
 Խոսքիս վկա,
 Քեզպես յերգիչ
 Չըկա՛, չըկա՛:
 Այդտեղ ծիտը
 Ծիտիկ-միտիկ
 Ասավ՝ «Համ
 Սրա՛նց մըտիկ,
 Ի՞նչ լավ դիտեն
 Իրար յեղել.

Ասա թողի՞ն
Պակաս տեղ ել,
Ե՛, լավ, հե՛րիք իրար դովեք,
Աշխարհ գիտե թե դուք ո՞վ եք:

ԱՐՄԱՏՆԵՐՆ ՈՒ ՏԵՐԵՎՆԵՐԸ

Տերեները ծառի ծերին
Ասում եյին զեփյուռներին.
— Բա ես հովտի արդն ու դարդը
ՄԵ՛նք չե՛նք ու մեր խիտ սաղարթը.
Ի՞նչ կլիներ ծառի հալը,
Թե չը լիներ մեր հով տալը:
Ամուն շողին,
Ամուն տաքին
Ես ծառի մոտ ո՞վ կըդա, ո՞վ,
Թե վոր չտանք մենք հով ու զով:
Արշալույսին,
Վերջալույսին
Մեր մեջ սոխակն յերդ չեր ասի,
Դուք զեփյուռներ,
Համափյուռներ,
Մեղ հետ յերկար չեյիք խոսի:
— Բաժին չունե՞նք այդ պարծանքից
Զայներ յեկան ծառի տակից,
— Ո՞վ ե, ասին տերեները.
— Այդպես բազմած վերեները,
Բա դուք խեկի չե՞ք ամաչում,
Վոր մեղ յերբեք չեք ճանաչում:
Զեր ծնունդը,
Զեր սնունդը
Գարուն դալիս
Ո՞վ ե տալիս:
Մենք այս ծառի արմատներն ենք,
Զեր ու ծառի դլախի տերն ենք.
Ի՞նչ եք, ի՞նչ չեք,

Կանաչեցե՛ք,
Բայց այս բանը լա՛վ իմացեք.
Տերեներն են գնացական,
Արմատները մնացական,
Արմատները վոր չորանան,
Ծառ ու տերեւ ո՞ւր կմնան:

ԿԱՊԻԿՆ ՈՒ ՀԱՅԵԼԻՆ

Իրեն տեսնելով
Հայելու միջին,
Կապիկը վոտով
Մի բոթեց արջին.
— Քեռի, սրա՞ն տես,
Սա ո՞վ ե, դիտե՞ս.
Ես ի՞նչ ուեիս ե,
Կնձոռտ արեիս ե,
Հրեշ, ցուցանք,
Պատիժ, վորձանք,
Ինձ տեղն ու տեղ կսպանելի,
Թե քիչ սրան նմանելի:
Բայց թե յես ել ինչի՞ հետ եմ,
Եղպես ցուցանք քչի՞ն գիտեմ,
Թվեմ զատ-զատ,
Մերոնց մեջ շա՞տ:
— Քան թե թվես
Զերոնց զատ-զատ,
Լավ չե՞նայես,
Խելո՞ք վրադ,
Արջը ասավ,
Բայց թե խոսքը տեղ չըհասավ:

ԽՈԶՆ ՈՒ ԱԳՈՒԱՎԸ

Մի դարեւոր կաղնու տակ
 Խոզն ագահ ու անհագ
 Այնքան կաղին զիստվեց,
 Վոր ցած ընկավ ու փովեց:
 Չարթնեց քնից ու տակից
 Ծառը փորեց արմատից:
 — Ի՞նչ ես անում, ա'յ անգետ-
 Կըչորանա արեից,
 Ագուավն ասավ վերեկից:
 — Չորանում ե՝ չորանա,
 Ինձ ի՞նչ ոգուտ՝ զորանա.
 Միայն կաղին ունենամ,
 Ուտեմ, պառկեմ, գիրանամ:
 — Ա'յ ապերախտ կենդանի,
 Ով քեզ նման վիզ ունի,
 Իր կույր աչքով չի տեսնի,
 Վոր կաղինը հյութալի
 Լոկ այս ծառն ե ձեղ տալի,
 Ագուավն ասավ խոզուկին,
 Այն կախ գլուխ կուղիկին:

ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌԸ

Մի ամլիկ գառ
 Իրեն համար
 Զուր եր խմում առվակից,
 Մեկ ել դեմի ձորակից
 Գայլն ե կտրում վերեր,
 Խոսքին տալով ես ձեր.
 — Ես ի՞նչ լրբություն,
 Ի՞նչ հանդզնություն,
 Այ զու փոլնքոտ,
 Վոչսարի լակոտ.
 Դու ի՞նչի՞ տեր ես,

Վոր գաս դնչովդ,
 Քթով պնչովդ
 Զուրս պղտորես:
 Բոնե՞մ դունչդ,
 Կարի շունչդ:
 « Մի բարկանար, պա'րոն դայլ,
 Քեզնից ցած եմ քա'նի քայլ,
 Ենպես բան ես ասում վոր...
 « Սո՞ւտ եմ ասում, ա'յ լղպոր.
 Եղ ել չըլնի հերվանը,
 Զեմ մոռացել են բանը,
 Վոր հենց եստեղ, նույն որը,
 Հայհոյեցիր իմ հորը:
 — Մի տարեկան դեռ չկամ...
 « Եւ, յեղբայրդ եր, ա'նզգամ»:
 — Ցես մի ծին եմ, մինուճար...
 — Խնամիդ եր անպատճառ,
 Կամ մեկը ձեր պիզծ ցեղից,
 Ել ժաժ չգաս քո տեղից:
 Զեր չների,
 Հովիվների
 Վոխը քեզնից յես հանեմ,
 Տե՛ս գլուխդ ի'նչ բերեմ:
 Ասավ, հսավ գառանը,
 Առավ, թռավ անտառը:

ԿՈՏԼՈԶ ԳԴԱԼԸ

Ճաշ ուտելիս սպաս բերին,
 Անփոր գղալն ընկավ հյուրին.
 Համ անփոր եր,
 Համ կոտլող եր,
 Բեռ չեր տանում
 Ուղեր, չուզեր:
 — Հայրիկ, — ասավ վորդին հորը,—
 Մի զու մտիկ ես ախպորը,
 Մեր կոտլողին բառնալ կուզե.

— Ե՛, բան չունես, վո՞րդիս, լուե՛,
Թե կոտլողը մեր կոտլողն է,
Նա իր որում բեռ տանող չէ:

ՄԿՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Մուկն ընկավ գոնեղուու
Ել չթողեց տուն-կտուր,
Չահել-ահել գեղովի
Չոջերից ջոկ, տեղովի,
Կանչեց, բերեց ժողովի,
Թե ի՞նչ անեն, վոր կատվեն
Մի հնարքով ազատվեն:
Յեկան գեղի ջոջերը,
Յերկար-բարակ պոչերը
Մասնակցեցին խորհրդին,
Մի մուկ խոսեց իր հերթին.
— Լսե՛ք, մկնե՛ր, ցեղակից,
Չունիմ վորդի, կողակից,
Յես մի անտեր ծերուկ եմ,
Բայց պատվավոր մի մուկ եմ.
Պակսեց ուժը իմ վոտի,
Պետք ե մեռնեմ անոթի.
Սովն ե չոքել գոանը,
Ա՛խ, այն կատուն, Մոռանը,
Մտից սատկում, տաղ անում.
Մուկ ե տեսնում, վաղ անում,
Բոնում գլխից, կախ անում,
Թաթով տալիս, խաղ անում,
Ուտում, քեֆը չաղ անում:
Եսպես զուլում ու կրակ,
Դեռ աչքերն ել ջուխտ ճրադ.
Բայց թե աղնիվ մեր ցեղը
Կորչելու չե զուր տեղը.
Յավն ել ունի իր դեղը:
Ա՛յ, բերել եմ յես մի զանդ,

Վափ-ծընդոց,
Մեջը զնդոց.
Կատվի վզից մենք կախ տանք
Վոր ի՞նչքան ել որորա,
Վոր ի՞նչքան ել շորորա,
Մտից սատկի տաղ անի,
Գալն իմանանք գաղանի:
Ե՛, զանդը ո՞վ կախ անի..
— Ալո, դու.
«Ալո՞ն տանի».
— Բալո, դու.
«Բալո՞ն կախե».
— Զալո, դու.
«Զալո՞ն կաղ ե».
— Մստոն կարձ ե».
— Փստո, դու.
«Եղ ել ի՞նդ ե».
— Համբո, դու.
«Յես տկար եմ».
— Զամբո, դու.
«Ասենք տարա,
Բա վոր կատուն գա ինձ վրա՞»:
— Բտոն, Խտոն թող մեկից
Բոնեն կատվի քամակից:
«Ի՞նչ ե խոսում չոր գանդը.
Լավ ե դու տար եղ զանդը.
Ել ինչ Բտո, ինչ Փստան»,
Ճստաց Բտոն ճստճստան:
— Լոկ' հանդուգն.
Կոտորվեք դուք.
Վախկոտներիդ յես թաղեմ.
Ճառ ասեմ թե՞ զանդ կախեմ,
Գոչեց ջոջը,
Բաշեց պոչը:

Պատ. Խմբաղիր՝ Ա. Դավթյան
Տեխ. Խմբաղիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաքանյան

Հրատ. 4042, դէ. լիազոր կ—4525, պատվեր 419, տիպաժ 5000


Հանձնված ե արտագրության 10 մարտի, 1937 թ.


Ստորագրված ե տպելու 25 մայիսի, 1937 թ.

Թուղթ 62×94 տպագրական մեկ մամուլ

Մեկ մամուլում 33280 նիշ, հեղինակային $\frac{3}{4}$ մամուլ.

Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի 65





ԳԻՆԸ 25 Կ.

АТАБЕК ХНКОՅԻ
БАСНИ

Գիշ Արմ. ССР, Еревան, 1937 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0333786

34729